ւակնները. հայրը Կարապետ քհ. մայրը Քնար, իր կողակիցը Խանում. (մեռած), իր զաւակը Մարտիրոս քհն. Յոբը. և աղջիկները Հռիփսիմեն, Հիփոլոսիանեն. ուրիշ երախտաւորները՝ Վարդան քհն. Մանիշակը և թուղթը կոկող Տիրատուր կրօնաւոր ինչն. (ՄՁ. Թ. 178)։

ՍԱՐԳԻՍ ԵՒ ՊԵՏՐՈՍ (Մհս.).— Քրձք. 1725ին Շղթայակիրի օրով Յոպպէի մաղազաներուն չինութեան վերակացուներ էին, ինչպէս կը հասկցուի հետեւեալ յիշատակարանէն.

«Ողորմութեամբ ամենազօրին Աստուծոյ մեք նուաստ պաշտօնեայք... գք և սպասաւորք Սբյ. աթոռոյս Եէմի. Գրիգոր և Յովհաննէս վրպք... մղոյքս. և զվերնյայրկքս. զորս ի գրաւէ ազատք. և զորս.... զամ. նորոգեցք. և զչրջապատսպ. պղջիս. և զամ. կամարքս և զօտաներս... շնրհօքն Այ. և միջնորդութեամբ Սրբոյն Նիկողայի. հյրպտին. աշխատութեամբ մեր և աթոռակալ Հանայ Յովհննս. վրդտին. և Պետրոս եւ Սարգիս մհտի. վերկցեց. տեղյս... և են սոքա կրկին յիշտկք. ի Սբ. յէմ. ի դուռն Սրբոյն Յկբյ. աթոռոյն ամ. հայոց ի փրկութիւն հոգոց մերոց և ի վայելումն օրհնեալ ազգիս հայոց ի թվ. ՌՃՀԴ (=1725) ամին վայելողքդ և ընթերցողքդ Ած. ողորմի ասացէք ամ. վերգրոյս. ամէն»։

ՍԵԹ ԱԲ. ԽԱՐԲԵՐԴՅԻ.— Ուխտաւորութեամբ այցելած է Ս. Յակոբի վանքը, կը յիշատակուի ԺԸ դարու ձեռագիր Սղոմիսագիրքի մը յիշատակարանին մէջ (Տաշ. Ցուց. էջ 178)։

ՍԵԹ ՎՐԴ. ԵԳԻՊՏԱՑԻ.— Մբ. Հայրը Գրիգոր. ՏԲ. 1510ին. օրինական դատավարութեամբ Բեթղեհէմի վանքը և տեղւոյն կալուածները կը փրկէ տեղացիներուն ոտնձգութիւններէն (Թոխ. հատ. Ա. էջ 241)։

ՍԵՂԲՈՍ ԱՄԻՐԱՑ ԵՐԵՒԱՆԵԱՆՑ, ԱԿՆՑԻ.— Հայրը Երեւանենց Ակնցի Մհս. Միհաս, կինը Փարվար (ըստ այլ յիշատակարաններու, Նազլը). որդիքը Մհս. Խաչատուր. Մհս. Գեորգ. Մհս. Մեսկեդիոս. դուստրը Մհս. Նուրին (Յառաջաբան Ժամագիրքի. տպ. Կ. Պոլիս, 1754, հրատարակուած Սեղբոսի ծախքովը), յիշեալը մեծ վէգիրին պաշտպագիրկեան էր և թարգման անգղ. դեսպանատան. 1727 ին ուխտաւորութեամբ կ'այցելէ Ս. Յակոբի վանքը ուր կը մնայ